https://doi.org/10.46991/hc.2023.19.1.176

The Development of Defensive Systems in Armenia in the Bronze and Iron Ages

Hayk Avetisyan
https://orcid.org/0009-0005-4335-5930
Doctor of History, Prof., Head of the Department of Archeology and Ethnography and of the Laboratory of Archaeological Research of Yerevan State University
hykavetisyan@yahoo. com

Artak Gnuni
https://orcid.org/0009-0009-5137-4233
Ph. D. on History, Assistant Prof., Assistant Professor of the Department of Archeology and Ethnography and Senior Researcher of the Laboratory of Archaeological Research of Yerevan State University
uruatry@rambler.ru

Arsen Bobokhyan
https://orcid.org/0000-0002-2277-8281
Ph. D. on History, Assistant Prof.
Director of the Institute of Archeology and Ethnography of NAS RA, Assistant Professor of the Department of Archeology and Ethnography and Senior Researcher of the Laboratory of Archaeological Research of Yerevan State University.
arsenbobokhyan@yahoo. com

Gagik Sargsyan
https://orcid.org/ 0009-0008-3448-488x
Researcher at the Institute of Archeology and Ethnography of the National Academy of Sciences of the Republic of Armenia
gaganj@rambler.ru

Levon Mkrtchyan
https://orcid.org/ 0000-0003-2221-4766
Chief Specialist of SNCO
Service for the Protection of Historical and Cultural Reserves-Museums and the Historical Environment
uruatry@rambler.ru

Key words: fortified area, fortress, cult center, Bronze Age and Iron Age, irrigation system, road.

Starting from the II millennium BC. in the Armenian Highlands, a system of separate regions is being formed, separated by natural boundaries. The formation of such areas provides for the presence of defensive systems, which include both central fortified settlements and a system of fortifications protecting

History and Culture. Journal of Armenian Studies, Vol.-1(19), 2023, pp. 176-191
Received: 17.03.2023
Revised: 30.03.2023
Accepted: 15.06.2023

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.
© The Author(s) 2023

the approaches to them, surrounding open settlements and the borders of regions. The fortresses were also protected by economic complexes, irrigation systems and main communication routes. This system continued to function in the Urartian period, being adapted to the requirements of a unified state.

Հայաստանի պաշտպանական համակարգի զարգացումը բրոնզ-երկաթեդարյան ժամանակաշրջանում

Հայկ Ավետիսյան
պ.գ.դ., պրոֆեսոր, ԵՊՀ հնագիտության և ազգագրության ամբիոնի վարիչ,
հնագիտական հետազոտությունների լաբորատորիայի ղեկավար,

Արտակ Գնունի
պ.գ.թ., դոցենտ, ԵՊՀ հնագիտության և ազգագրության ամբիոնի դոցենտ,
հնագիտական հետազոտությունների լաբորատորիայի ավագ գիտաշխատող

Արսեն Բոբոխյան
պ.գ.թ., դոցենտ, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն
ԵՊՀ հնագիտության և ազգագրության ամբիոնի դոցենտ, հնագիտական հետազոտությունների
լաբորատորիայի ավագ գիտաշխատող

Գագիկ Սարգսյան
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող

Լևոն Մկրտչյան
Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանություն
ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ

Հիմնաբառեր՝ պաշտպանական շրջան, ամրոց, ծիսա-պաշտամունքային կենտրոն, բրոնզ-երկաթեդարյան ժամանակաշրջան, ռոգման համակարգ, ճանապարհ:

Սկսած Ք.ա. II հազ. կեսից կապված սոցիալ-մշակութային ինտեգրման գործընթացների հետ, Հայկական լեռնաշխարհում ձևավորվում է բնական սահմաններով տարանջատվող առանձին շրջանների մի համակարգ: Նման համակարգի գոյությունը ենթադրում է պաշտպանական կուռ համակարգի առկայություն, որն ընդգրկում է ինչպես կենտրոնական պարսպապատ բնակավայրերը, այնպես էլ դրանց մատույցները, շրջակա բաց բնակավայրերը և տարածաշրջանային սահմանները պաշտպանող ամրոցների համակարգ [Ավետիսյան 2014, 65]: Այսպիսով ձևավորվում է յուրատեսակ պաշտպանական շրջան:

Развитие оборонительных систем в Армении в эпоху бронзы и железа

Гайк Аветисян
Докт. Ист. Наук проф.
Заведующий кафедрой археологии и этнографии и руководитель лаборатории археологических исследований Ереванского Государственного Университета

Артак Гнуни
Канд. Ист. Нук. Доц.
Доцент кафедры археологии и этнографии и старший научный сотрудник лаборатории археологических исследований Ереванского Государственного Университета

Арсен Бобохян
Канд. ист. нук. доц.
Директор института археологии и этнографии НАН РА
Доцент кафедры археологии и этнографии и старший научный сотрудник лаборатории археологических исследований Ереванского Государственного Университета

Гагик Саргсян
Научный сотрудник института археологии и этнографии НАН РА

Левон Мкртчян
Главный специалист ГНКО
Служба по охране историко-культурных заповедников-музеев и исторической среды

Ключевые слова: укрепленный район, крепость, культовый центр, эпоха бронзы и железа, ирригационная система, дорога.

Начиная со II тыс. до н. э. в Армянском нагорье формируется система отдельных районов, разделенных естественными границами. Образование подобных районов предусматривает наличие оборонительных систем, которые включают в себя как центральные укрепленные поселения, так и систему укреплений, защищающих подступы к ним, окрестные открытые поселения и границы регионов. Крепости защищали также хозяйственные комплексы, ирригационные системы и основные пути сообщения. Эта система продолжала функкционировать и в урартский период, будучи приспособленной к требованиям единого государства.

* * *

Պաշտպանական շրջանի ձևավորումը: Կայուն պաշտպանական համակարգերի ձևավորումը Հայաստանում սկիզբ է առնում Ք.ա. II հազ. կեսից: Այսպես, Արագածոտնում՝ Ծաղկահովտի սարահարթում ամրացված շրջանն ընդգրկում էր սահմանների պարագծով

տեղադրված ամրոցները. Արագածիբերդը՝ արևելքում, Բերդիդոշը՝ հյուսիսում, Հնաբերդը՝ արևելքում և Միրաքը՝ հարավ արևելքում [Smith et al. 2009, 281, 287, 302, 309][1]:

Բացի սահմանապահ ամրոցների համակարգից, ամրացված շրջանում ընդգրկված էին տարածաշրջանային նշանակության խոշոր ամրոցները. օր.՝Գեղարոտը, Ծաղկահովիտը և դրանց մատույցները պաշտպանող համեմատաբար փոքր ֆորպոստային ամրոցները. Բերդիդոշ, Ծիլքար, Աշոտ Երկաթ, Պոլոզ Սար [Smith et al. 2009, 396]: Այսպիսով Ծաղկահովտում ձևավորվում է պաշտպանական ամրությունների բազմաստիճան մի համակարգ: Տարածաշրջանը հանդիսանում էր նաև ծիսա-պաշտամունքային կենտրոն [Бадалян, Смит 2008, 54-55]:

Ամրոցված շրջան է Ավան-Կոշ-Ուջան գյուղերի միջև ընկած հատվածը, որտեղ հանդիպում են ինչպես կենտորանական դիրք գրավող և այնպես էլ նրանց շուրջը տարածվող ավելի փոքր ամրոցներ և դրանց պաշտպանության ներքո գտնվող բաց բնակավայրեր[2]:

Կենտրոնական դիրք գրավող ամրոցներն երկուսն են՝ Ավան-Արագածը[3] և Մոտկանը[4]: Ամրոցները հանդիսանում էին նաև խոշոր ծիսա-պաշտամունքային կենտրոններ: Ամրոցների անմիջական հարևանությամբ հավաստված են ծիսապաշտամունքային համալիրներ՝ բաղկացած աշտարակատիպ կառույցներից, հարթակներից և զոհասեղաններից: Մասնավորապես, Ավան-Արագած ամրոցի հարավային մատույցներից սկսվում է «Կուաշ» մեգալիթյան համալիրը: Այն մոտ մեկ կմ երկարությամբ ձգվող համալիր է, որտեղ մի քանի մետր հեռավորությամբ՝ շարքով տեղակայված են աշտարակատիպ կառույցներ, որոնք իրար են միանում ճանապարհներով և հարթակներով: Սրանց հարևանությամբ՝ քարաշարերով առանձնանում են նաև հսկայական դամբանախմբեր՝ մեծ ու փոքր դամբաններով:

Առանձին ուշադրության է արժանի Մոտկան ամրոցի սրբավայրը: Այն բաղկացած է երկար ձգվող դարավանդներից, որոնց ամեն հարկաբաժնում տեղակայված են աշտարակներ, հարթակներ և զոհասեղան: Այս դարավանդների ամենաստորին հարկաբաժնից սկսվում է զույգ քարաշարով մի ճանապարհ, որը ձգվում է քիչ արևելք՝ մի բլրի գագաթ, որտեղ տեղակայված են երկու բոլորձև մեգալիթյան աշտարակներ [Մկրտչյան 2018, 73]:

Ամրոցները գտնվում են իրարից մոտ 4 կմ հեռավրության վրա՝ միջակայքում թողնելով 1370 մ մինչև մոտ 1700 մ բարձրությամբ գրեթե հյուսիս-հարավ ձգվող, իրարից ոչ շատ խորը կիրճերով առանձնացող բլրաշղթաներ (ցամաքած գետերի և սելավատարերի հնահուներ): Առավել խոշոր և արևահայաց բլուրների լանջերը՝ պատված են բնակելի կամ մշակովի դարավանդներով, որոնց քարաշարերի հետքերը այժմ էլ երևում են:

Բնականաբար, նման ենթակառուցվածքներ ունեցող ամրոցները, չէին կարող չունենալ իրենց պաշտպանական համակարգը, որոնք կփակեին տարածքի առավել խոցելի հատվածները, ճանպարհները կամ կիրճերը: Մոտկանի համալիրը հյուսիսից փակում էր Սահակաբերդը, որին

[1] Նմանատիպ սահմանային ամրոցների համակարգ հավաստված է նաև Իորիի ավազանում՝ (Пицхелаури 2018, 53)
[2] Հետազոտությունը Լ. Մկրտչյանի: Այս կարևորագույն հանգույցն իր նշանակությունը պահպանում է նաև անտիկ և միջնադարյան ժամանակաշրջաններում (անտիկ Քարհանքի ամրոցը Կոշից ոչ հեռու) (Оганян 1990, 9)
[3] Պետական ցուցակ 2. Արագածոտնի մարզ, 12. գ. Ավան 1. ամրոց
[4] Պետական ցուցակ 2. Արագածոտնի մարզ, 109. գ. Ուջան 4. ամրոց Մոտկան

հաջորդում է «Վանքի ավերակ» (Բքոյի գեղ) ամրոցն՝ քարքարոտ մի բլրի վրա[1], որը հավանաբար Մոտկանի զույգ ամրոցն էր, ինչպես Կուզմամեն Արագած-Ավանի համար[2]:

Ուշ բրոնզի և վաղ երկաթի դարաշրջաններում Արագածոտնում հանգուցային դեր էր կատարում Շամիրամի ամրոց-քաղաքատեղին: Այս ժամանակաշրջանին են պատկանում քաղաքատեղիի պարիսպները և մոնումենտալ կառույցները [Արեշյան, Ասատրյան, 1985, 206-207][3]:

Խոշոր պաշտպանական համակարգ եզրում էր Արարատյան դաշտը նաև արևմտյան կողմից, Արարատի հյուսիսային լանջերով: Այստեղ հավաստված են մի քանի ամրացված բջիջ՝ Թաշբուրունի, Մալաքլուի, Բոզկուրտի, Կասիմրջիի ամրացված համակարգերը, որոնք ընդգրկում էին խոշոր ուրբանիզացված բնակավայրեր, դրանց մատույցները պաշտպանող հենակետեր [Ивановский 1911, 50-60, Özfirat 2017, 60-69]: Արարատյան դաշտի և նրան հարող Շարուրի դաշտի պաշտպանական համակարգի մի մասն են կազմում Նախիջևանի կիկլոպյան ամրոցները[4]: Ուշ բրոնզի դարաշրջանից հայտնի է Ճահուկ բերդը: Վաղ երկաթի դարում վերաբնակեցվում է Թագավորանիստ (Շահթախթի-Գյաուրկալա) ամրոցը: Վաղ երկաթի դարին են պատկանում նաև Ղալաջիկ, Ղազանչի, Չալխան կալա: Անմիջապես նախաուրարտական շրջանին է վերաբերում Արբա ամրոցը, ընդ որում այստեղ բլրի գագաթին փաստագրված է սյունազարդ սրահ [Ավետիսյան և այլք 2020]:

Հավանաբար նմանատիպ համակարգ գոյություն ուներ նաև Երևանի տարածքում: Այստեղ Արարատյան դաշտի և նախալեռնային գոտու սահմանը հանդիսացող ռազմավարական բարձունքներին տեղադրված են մի շարք ամրոցներ, որոնք փաստորեն վերահսկում են Արարատյան դաշտի մուտքը: Այս ամրոցների թվին պետք է դասել Զորաբերդը., Աղվեսաբերդը, Ծիծեռնակաբերդը[5], Մուխանաթ թափան [Байбуртян 2011, 74], Կարմիր բերդը [Եսայան 1972, 17], Կարմիր Բլուրի նախաուրարտական բնակատեղին[6]: Այսպիսով այսօրվա Երևանի տարածքում ձևավորվում է պաշտպանական շրջան, որն իր նշանակությունը պահպանել էր նաև հետագա ժամանակաշրջաններում[7]:

---

[1] Պետական ցուցակ 2. Արագածոտնի մարզ, 109. գ. Ուջան 3. ամրոց Բքոյի գեղ:

[2] Պետական ցուցակ 2. Արագածոտնի մարզ, 12. գ. Ավան 3. ամրոց Կուզմամե

[3] Շամիրամը որպես տարածաշրջանային ամրացված կենտրոն իր նշանակությունն էր պահպանում նաև անտիկ դարաշրջանում (Оганян 1990, 11): Միջնադարյան ժամանակաշրջանում նշված տարածքում ձևավորվում է հզոր պաշտպանական մի հանգույց, որը ներկայացված է Աշնակի, ամրոցախումբը, Ներքին Սասնաշենի, Զաքարի բերդի ամրոցները, որոնք մեծ նշանակություն ունեին Արարատյան դաշտի պաշտպանության կազմակերպման համար և որտեղ տեղակայվում էին արքայական կայազորերը (Асатрян 1989, 6)

[4] Շարուրի շրջանն իր այս գործառույթները պահպանել է մինչև միջնադար (հմմտ. Խորենացի, I ԺԲ):

[5] Պետական ցուցակ, 1. Երևան, 3. Արաբկիր, 1 . Զորաբերդ, 1. Երևան, 6 Կենտրոն 14. Ծիծեռնակաբերդ, 1. Երևան, 8. Նոր Նորք, 10. Աղվեսաբերդ

[6] Հ. Մարտիրոսյանը բնորոշում է նախաուրարտական Կարմիր Բլուրը որպես կենցաղային բնակավայր ի տարբերություն ամրոցների (Мартиросян 1961, 33-34), սակայն Ս. Եսայանը նշում է, որ Հրազդանի ժայռոտ ափին տեղադրված էր փոքր ամրոց (Есаян 1969, 59-60)

[7] Միջնադարյան ժամանակաշրջանում Երևանի պաշտպանական շրջանի նշանակության մասին վկայում են ինչպես հնագիտական, այնպես էլ մատենագրական տվյալները: Քաղաքը հիշատակում է Սեբեոսը արաբական արշավանքների համատեքստում, նշելով, որ հակառակորդին չի հաջողվում գրավել ամրոցը. «Եւ եկին ժողովեցան ի յԵրևան, և մարտեան ընդ բերդին, և ոչ կարացին առնուլ» (Սեբէոս, ԽԲ, 14): Ամենայն հավանականությամբ Խելիդոնիոն անունով Հովհաննես Սիկիլիացին հիշատակում է Ծիծեռնակաբերդը (Հակոբյան 2010, 25): Հնագիտական տվյալների մասին տես՝ Ղաֆադարյան 1975, 15-17 (Երևանի միջնաբերդի դեպի Կոնդ տեղափոխելու մասին), Հակոբյան 2010, 25-30 (Ծիծեռնակաբերդի միջնադարյան հուշարձանների մասին), Пиотровский 1950, 13 (Կարմիր Բլուրի XI-XIII դդ. դղյակի մասին):

Մի քանի այսպիսի հանգույցներ ձևավորվում են նաև Սևանա լճի ավազանում: Դրանք վերասկում են ավազանի առանձին հատվածներ ուղիղ տեսողական կապի մեջ գտնվելով միմյանց հետ: Այսպես կարելի է առանձնացնել փոխկապակցված միավորներ, որոնք վերահսկում են Մասրիկի հովիտը (Գեղամասար, Սոթքի ամրոցներ, Այրք, Ակունք) [Biscione et al. 2002, 80-85] և Մարտունու սարահարթը (Ալոյի Կող, Մարտունի, Քյուրդի Կող, Մթնաձոր) [Biscione et al. 2002, 142-161]:

Սևանյան հանգույցը հյուսիսից հարևանում է Տավուշյան ամրաշինական շրջանին: Տավուշի տարածաշրջանի Աստղիբլուր ամրոցը Ք.ա. I հազ. վերածվում է Ենոքավան գյուղի շրջակայքում տեղադրված ամրացված շրջանի վարչական և ծիսա-պաշտամունքային կենտրոն: Աստղիբլուրի ամրոցը արևմուտքից պաշտպանվում էր Կոտաքարի, արևելքից՝ Թղկուտաձորի, հյուսիսից՝ Արմունգաղբյուրի, հյուսիս արևմուտքից՝ Բերդատեղիի ամրոցներով [Есаян 1976, 213-214][1]: Այս պաշտպանական համակարգը որոշ փոփոխություններով շարունակում է գործել նաև միջնադարում[2]:

Ք.ա. II-I հազ. Սյունիքում՝ Աղավնոյի հովտում ձևավորվում է բնակավայրային խոշոր ագլոմերացիա, որի կենտրոնը մ.թ.ա. I հազ. սկզբին հանդիսանում էր Միրիկի (Աղահեճ) ամրոցը, որը հանդիսանում էր տարածաշրջանի վարչական և ծիսական կենտրոն: Վարչական և պաշտամունքային համալիրները հստակ դիտարկվում են նեղ ու երկար պարսպապատ միջնաբերդում: Պաշտամունքային համալիրը (եռաստիճան աղոթարան-հարթակը, կից կռոց հարթակը, ամրոցանիստ բլրի ստորոտից, 70 մ երկարությամբ բարձրացող թեքադիր աստիճանավանդակը) տեղադրված էր հրվանդանի կենտրոնական հատվածում [Սարգսյան և այլք 2022, 202-203]:

Միրիկյան ագլոմերացիան ընդգրկում էր մի շարք ամրոցներ և ամրացված բնակավայրեր: Խոշորագույնն է Աղավնաբերդ ամրոցը, որը հանդիսանում է Աղավնո-Սթունիս միջագետքի խոշորագույն ամրոցը [Սարգսյան և այլք 2022, 58]: Այս համակարգում է Մանուկ-բերդ պահակային ամրոցը: Տարածքի հաջորդ ամրացված բնակատեղին՝ Միրիկ-2-ն է, որը գտնվում է Միրիկի ամրոցից 2,5 կմ. հարավ-արևմուտք Միրիկ գետակի ձախակողմյան լեռնաբազկի ամենաբարձր կետում և գտնվում է ուղիղ տեսողական կապի մեջ Միրիկ 1 և Հերիկ ամրոցների հետ: Միրիկի ագլոմերացիայի սահմաններում են գտնվում նաև Հերիկ և Խոզնավարի լիճ ամրոցները [Սարգսյան և այլք 2022, 78]: Միրիկյան ագլոմերացիան վերահսկում էր նաև Հոչանցի ավազանը, մասնավորապես ուղիղ տեսողական կապի մեջ գտնվող Սոնասար, Տանձուտ-1, Տանձուտ-2, Հոչանց ամրոցների կողմից վերահսկվող տարածքները:

Միրիկյան ագլոմերացիայի հարավում ևս մեկ խոշոր հանգույց գտնվում է Արահուծ եւ Ծիծեռնավանք գյուղերի շրջակայքում: Այս միավորման ամրոցներից պետք է նշել Արահուծ ամրոցը, որը գտնվում է համանուն գյուղից մոտ 1 կմ հարավ-արեւմուտք, Աղավնո գետի Խնածախ վտակի աջ ափին բարձրացող բլրի գագաթի հարավահայաց լանջին, դեպի ՀՀ Սյունիքի մարզի

[1]Աստղի բլուրն իր նշանակությունը պահպանում է նաև միջնադարյան ժամանակաշրջանում: Մասնավորապես Թանիկ ամրոցն ամենայն հավանականությամբ հանդիսանում էր Աստղիբլուրի պաշտպանական համակարգի մի մաս (Есаян 1992, 19): Իորիի ավազանում Ուդաբնոյիր ջրջակայքում այսօրինակ կենտրոն է հանդիսանում Նառմարի Գորա հանգուցային բնակավայրը (Пицхелаури К. 2018, 53)

[2] Միջնադարյան ժամանակաշրջանում պաշտպանական համակարգի որոշ փոփոխությունները թելադրված էին տարածքի արժեորմամբ երկրի կենտրոնական շրջանների պաշտպանության տեսակետից, ընդ որում օգտագործվում էին ինչպես կիկլոպյան ամրոցները, այնպես էլ կառուցվում էին նորերը (Есаян 1992, 8)

Խնածախ գյուղ տանող ճանապարհի խաչմերուկին [Սարգսյան և այլք 2014, 166-169]: Ծիծեռնավանքյան հանգույցի հաջորդ կարեւոր կենտրոնը Ծիծեռնավանքի ամրոցն էր, որը գտնվում է Ծիծեռնավանք գյուղից 2,1 կմ. հարավ-արևմուտք՝դեպի Աղավնոյի հովիտն իջնող Խոզնավար և Բայանդուր գետակների միջանկյալ երկարավուն լեռնաբազկի ջրբաժանի բարձր բլուրին, ինչպես նաև Դաշտաքար ամրացված բնակատեղին Աղավնո գետի աջ ափին [Սարգսյան և այլք 2022, 124, 126]:

Եվս մեկ կուտակում հավաստված է Աղավնոյի վերնահոսանքում, Աղավնոյի և Հոչանցի գետահովիտների միավորման վայրում: Տնտեսական կարևոր նշանակություն ունեցող այս հատվածում հավաստված են Եզնագոմեր, Սպիտակաջուր, Հակ ամրոցները:

Նպաստավոր դիրքը, ռազմավարական ճանապարհների վերասկողությունը գերակա դիրք են տալիս Միրիկյան ագլոմերացիային ձևավորելով ներկայիս Քաշաթաղի շրջանի հյուսիսային հատվածում մի ամփոփ պաշտպանական շրջան, որը փաստորեն մոտավորապես համընկնում է միջնադարյան աղբյուրների Աղահեճք գավառի տարածքի հետ [Յակոբեան 1998, 323-324]:

Միևնույն ժամանակ, այս պաշտպանական շրջանում հստակ բաժանված էին գործառույթները: Այսպես, Աղավնո-Հոչանց գետերի ջրբաժանի գագաթին կանգնած Սոնասարի ամրոցը ուղղիղ տեսողական կապով հարաբերվում է Աղավնոյի հովտի Արահուծ, Ծիծեռնավանք, Սթունիս, Աղավնաբերդ, Մանուկ բերդ, Միրիկ-Աղահեճ, Միրիկ 2, Հերիկ, Աղբատխերտ ու Եղնագոմեր ամրոցների հետ և, հնարավոր է, հանդիսացել է նրանց միավորման, ՝կորդինացման՝ ու ՝արագ ահազանգման՝ հենակետը [Սարգսյան և այլք 2022, 201-202]: Սևանա լճի ավազանում նմանատիպ գործառույթներ կարող էր ունենալ Գեղամասար փոքր ամրոցը, որը գտնվում է ուղիղ տեսողական կապի մեջ ինչպես Սոթքի, այնպես էլ Մարտունու տարածաշրջանների ամրոցների հետ [Smith et al. 2009, 96]:

Տնտեսական անվտանգության համակարգերը: Գյուղատնտեսական համալիրների վերահսկողությունը: Պաշտպանական շրջանները հանդիսանում էին նաև խոշոր տնտեսական բջիջներ, որոնց անվտանգությունն առաջնահերթ խնդիր էր հանդիսանում: Հանդես են գալիս ամրացված փարախներ: Այդօրինակ համալիրների թվին է դասվում Միրիկ-4 համալիրը: Այն տեղադրված է Միրիկ-1 ամրոցից 4,1 կմ. հարավ-արևմուտք, ալպյան արոտավայրերում և համաժամանակյա է Միրիկ 1-ին: Կառույցները ներկայացված են ներփակ, միմյանց հաջորդող բաց բակերով և կացարանների նմանվող փոքր սենյակներով: Եզրապատերի շարված են զգալիորեն ավելի խոշոր քարերեից քան ներսի պատերն ու միջնորմերը: [Սարգսյան և այլք 2022, 60]:

Խոշոր տնտեսական համալիրի առկայության մասին է վկայում նաև Միրիկ-1 ամրոցից ոչ հեռու գտնվող այսպես կոչված «ցանկապատը» Այն գտնվում է Միրիկ 1 ամրոցի հարավային կողմում: Պարսպի լայնությամբ մոտ 1.0 մ է, շարված օրթոստատ մեծ քարերից, առանց շաղախի, երկշերտ, մեջը լցոնված մանր քարերով: Այն հստակ ուրվագծվում է գետնի մակերեսին իր ընթացքի գրեթե ամբողջ երկարությամբ: Պապահպանված բարձրությունը չի գերազանցում 0.5 մ-ը: Պարիսպ-ցանկապատը հատակագծում պայտաձև է և այսօրվա պահպանված հատվածի ամբողջ երկարությունն է 1730 մ: Ակնհայտ է, որ ժամանակին ցանկապատը ներքևում փակվում էր Միրիկ

գետակի ափեզրով: Այսպիսով՝պարիսպ-ցանկաատը ներփակում է մոտ 600x600 մ. երկու սելավատար ձորակները: Պարսպի սկզբնական գործառույթը այսօր դեռևս հստակ չէ, բայց կարելի է ենթադրել, որ այն ,ժամանակակից լինելով ամրոցին, կառուցվել ու օգտագործվել է որպես հնագույն քաղաքի հոտերի անասնափարախ [Սարգսյան և այլք 2022, 72]:

Փարախներ հավաստված են նաև Ծաղկահովտի սարահարթում: Մասնավորապես փարախներ կան Հնաբերդ ամրոցի հարևանությամբ [Smith et al. 2009, 273, 275]:

Անասնափարախներ կարող էին տեղադրված լինել նաև ամրոցներում: Այսպիսի ամրոցների թվին կարելի է դասել Աղավնոյի հովտում Հակ-1 ամրոցը: Այն զբաղեցնում է բլրի գագաթը և, մասամբ, հարավային լանջը՝ հատակագծում կլորավուն է, ընդգրկված է մեկ ընդհանուր պարսպագծի մեջ և բաղկացած է երկու մասից՝ բնակելի հատվածից ու ամրացված անասնափարախից [Սարգսյան և այլք 2022, 33]: Բնակելի հատվածը զբաղեցնում է ամրոցի հարավային մասը, որտեղ ուրվագծվում են միմյանց խիտ տեղադրված՝ ոչ մեծ սենյակներ հիշեցնող ուղղանկյուն կառույցներ և նրանց մեջ նկատվող ավելի մեծ, տձև հատվածներ, հավանաբար, բաց բակեր ու փողոց-անցումներ: Նման կառույցներ նկատվում են նաև շրջապարսպից դուրս՝ հարավային լանջին:

Անասնափարախը նեղ երկար, միջանցքատիպ հատված է (մոտ 20x120 մ), որը կորագծով փակում է ամրոցի հյուսիսային կողմը: Այն տեղադրված է բլրագագաթի ժայռագծի բնական երկփեղկված թամբաձև բացվածքի մեջ և ժայռոտ եզրագծերում՝ ամրացված լրացուցիչ ձեռակերտ շարվածքներով: Անասնափարախը՝ 3-4 ընդլայնական դրված, միաշար միջնապատերով բաժանվում է մի քանի, ավելի փոքր, միմյանց հետ հաղորդակցվող հատվածների: Ուշագրավ է, որ անասնափարախի միջնապատերով բաժանված յուրաքանչյուր հատվածի անկյունում կա մեկական փոքր, ուղղանկյուն բնակելի սենյակ: Ամրացված անասնափարախի մուտքը արևելյան եզրին է: Այն երկատված ժայռագծի երկար միջանցքի ձևով իջնում է բլրի բարձունքից և [Սարգսյան և այլք 2022, 33]:

Բացի ամրոց-փարախներից գոյություն ունեին նաև ամրացված փարախներ, օրինակ՝ Աղավնոյի հովտում՝ Հակ-2-ը և «Միջանցքը»: Նմանատիպ ամրացված փարախներ են հանդիսանում նաև Տավուշի մարզի Կոթաքար, Թղկուտ ձոր, Արմունգաղբյուր ամրոցները, որտեղ բացակայում են շինությունների հետքերը: Ս. Եսայանի ենթադրությամբ, այս ամրոցները խաղաղ ժամանակաշրջանում հանդիսանալով անասնափարախներ, պատերազմական ժամանակաշրջանում ծառայում էին բնակչության պատսպարման համար [Есаян 1976, 214]:

Մեկուսի կանգնած բարձր լեռնային ալպիական անասնափարախները պաշտպանում էին ամրոցները: Այսպիսի ամրոցների թվին է պատկանում Եզնագոմեր ամրոցը, որը Հայաստանի խոշորագույն ամրոցներից է: Այն տեղադրված է ընդարձակ սարահարթի հյուսիսային եզրագծին բարձրացող ու շրջապատի ալպյան մարգագետինների վրա գերիշխող հարթ մակերեսով բլրի վրա և գտնվում է ուղիղ տեսողական կապի մեջ Հակ-1, «Միջանցք» համալիրների, Հերիկ ամրոցի հետ [Սարգսյան և այլք 2022, 23-31]:

Այսպիսով կարելի է ենթադրել, որ Աղավնոյի ամրացված շրջանի հյուսիսային հատվածը գերազանցապես անասնապահական գոտի էր:

Ոռոգման համակարգերի վերահսկողությունը: Տնտեսական անվտանգության ապահովման հաջորդ կարևոր գործոնը՝ ոռոգման համալիրների և ջրամբարների պաշտպանությունն է

[Դանիելյան 2019, 629-634][1]: Այսպես, Ա. Քալանթարի վերակազմությամբ Արագածի ոռոգման համալիրը հանգուցային կետերում վերահսկվում էր ամրոցների ցանցով [Քալանթար 2007, 286-292]: Համակարգի առաջին մագիստրալ ջրանցքը վերահսկում էին Արագածի[2] ամրոցը, ինչպես նաև Արա գյուղի ամրոցների համակարգը[3]: Այս նույն մայր ջրանցքի առանձին հատվածներ վերահսկում են Զյանբերդի [Արեշյան և այլք 1977, 79], Փերսիի, Թակիայի[4], Ուշիի[5] ամրոցները, Արտաշավանի ամրոցների համակարգը[6]: Հաջորդ մայր ջրանցքի երկայնքով էին տեղադրված Փարպիի[7] և Աղթամիրի [Սիմոնյան և այլք 1996, 68] ամրոցները: Առանձին ջրանցքներ վերահսկում են նաև Նիգատուն[8] և Անտառուտ[9], Կոշի և Գառնահովտի[10] ամրոցները: Այս նույն համակարգում պետք է դիտարկել Ծաղկահովտի սարահարթում իրիգացիոն համակարգերը վերասկող ամրցները. Լեռնապարը՝ ջրանցքներ, Հնաբերդը՝ ջրանցքներ և ջրամբար, Գեղարոտը՝ ջրամբար, Ծաղկահովիտը՝ ջրանցք, ջրամբար [Smith et al. 2009, 257-264, 269, 351-354]:

Արարատի հյուսիսային լանջերին տեղադրված ամրոցները միաժամանակ պաշտպանում էին Իգդիրի բարեբեր սարահարթը [Özfirat 2017, 65], ինչպես նաև Արարատյան դաշտի արևմտյան մատույցները: Միաժամանակ այս տարածքում էր սկիզբ առնում ձնհալի ջրերը և անձրևաջրերը դեպի դաշտավայրեր մղող Արագածյանի նման ոռոգման մի համակարգ: Այստեղ Դեռևս XIX դարում հավաստվել են դարավանդաձև տեղադրված արհեստական լճեր [Шопен 1852, 420-421]: Եվս մեկ ջրանցք հավաստված է Մեծ և Փոքր Մասիսները բաժանող գոգավորությունում: Ա. Մխիթարյանը այն նկարագրում է որպես մեծ տիտանյան մի շինություն, որը կործանվելով ցրել էր իր բեկորները այս ու այն կողմ [Մխիթարեանց Ա., 1904, 72]:

Նմանատիպ ոռոգման ցանց գոյություն ուներ նաև Գեղամա լեռներում և Կոտայքի սարահարթում [Քալանթար 2007, 294]: Այս համատեքստում հարկ է նշել անձրևաջրերի կուտակման համար պատվարները Կապուտանի ամրոցի մերձակայքում[11], ինչպես նաև Արամուսի ամրոցիցն ոչ հեռու գտնվող ջրամբարը[12]:

Տնտեսական համալիրների պաշտպանության համատեքստում պետք է դիտարկել նաև Սոթքի ոսկու հանքերի պաշտպանության խնդիրը: Սկսած Ք.ա. II հազ. կեսից այստեղ ձևավորվում է ամրոցների և ամրացված բնակավայրերի մի համակարգ [Սոթք 1, 2, Նորաբակ 1, 2, Կոթ, Ներքին Շորժա, Ազատ, Կոլ Պալ, Ծվակ, Քարե դուռ] [Bisione 2002, 67, 251, 331, Բոբոխյան, Կունցե, 2022, 21-23]:

[1] Պաշտպանական և ոռոգման համակարգերի զուգորդման և ոռոգման և միլիտարիզացված հասարակության կապի մասին տեսական և ազգաբանական դիտարկումները տես՝ Мечников 1898, 101, Виттгофель, б.г.
[2] Պետական ցուցակ 2. Արագածոտնի մարզ 15. գ. Արագած, 1.ամրոց
[3] Պետական ցուցակ 2. Արագածոտնի մարզ 18. գ. Արա, 1.ամրոց
[4] Պետական ցուցակ 2. Արագածոտնի մարզ 24. գ. Բազմաղբյուր, 1 Թակիա .ամրոց, 5 Փերսի ամրոց, Արեշյան և այլք 1977, 88
[5] Պետական ցուցակ 2. Արագածոտնի մարզ 108. գ. Ուշի, 1.ամրոց
[6] Պետական ցուցակ 2. Արագածոտնի մարզ 20. գ. Արտաշավան, 1-5 ամրոց
[7] Փարպիում հավաստված է ուրարտական ժամանակաշրջանի ամրոց: Հետազոտությունները՝ Գ. Սարգսյանի
[8] Պետական ցուցակ 2. Արագածոտնի մարզ 20. գ. Նիգատուն, 1.ամրոց Ղալաչա
[9] Պետական ցուցակ 2. Արագածոտնի մարզ 10. գ. Անտառուտ, 1.ամրոց
[10] Պետական ցուցակ 2. Արագածոտնի մարզ 29. գ. Գառնահովիտ, 1-2.ամրոց
[11] Հետազոտությունները Գ. Սարգսյանի, Լ. Մկրտչյանի, Ա. Գնունու
[12] Պեղումները՝ Հ. Ավետիսյանի

Ճանապարհների անվտանգության ապահովումը: Ամրացված շրջանի կարևոր գործառույթներից է նաև ռազմավարական ճանապարհների և դեպի խոշոր տնտեսական համալիրներ տանող ճանապարհների պաշտպանությունը:

Այսպես Արարատի լանջերին գտնվող պաշտպանական հանգույցը փաստորեն փակում էր Բայազետից՝ Արարատյան դաշտ տանող ճանապարհը, ինչպես նաև դեպի Կուլապի աղի հանքերը տանող ճանապարհը [հմմտ.՝Պարրոտ 1990, 84]: Շամիրամի ամրոցը փակում էր դեպի Արարատյան դաշտը տանող ամենակարճ ճանապարհը[1]:

Խնածախ-Ծիծեռնավանք ճանապարհին են տեղադրված Խնածախ[2], Արահուծ և Ծիծեռնավանք ամրոցները[3]: Վերիշեն-Խոզնավար-Միրիկ ճանապարհի սկզբնամասում է գտնվում Ձագեձոր-1 – Ձագեձոր- 2 ամրացած բջիջը[4]: Ճանապարհի երկայնքով տեղադրված են մի շարք ամրոցներ. Խոզնավարի լիճ, Միրիկ-1, Միրիկ-2 ամրոցները: Սիսիանի տարածաշրջանից դեպի Հակ տանող ճանապարհը վերահսկում է Սպիտակաջուր ամրոցը:

Ամրացված վերահսկողություն էր սահմանված նաև մեկ այլ կարևորագույն ճանապարհային հանգույցի նկատմամբ՝ Սոթք-Քարվաճար: Այստեղ կարևորագույն դեր էր կատարում Սոթքի ամրացված շրջանը: Սոթքը Գեղարքունիքից Արցախ և Ուտիք տանող մի շարք ճանապարհների կարևոր խաչմերուկ էր [Բարխուդարյան 1973, 7]: Այս համակարգում պետք է դիտարկել Սոթքի ամրոցների համակարգը, Այրքի, Նորաբակի [Bisione 2002, 67,72, 76, 85], Ծովաթաղի [Դանիելյան, 2022, 229] Ծառի[5] ամրոցները: Այս ամրացված ճանապարհը փաստորեն համընկնում է Դվին-Պարտավ ճանապարհի մի հատվածի հետ [Մանանդյան 1936, 190-193]: Ամրացված հանգույցներ են առկա նաև Ճամբարակ-Գանձակ, Ճամբարակ-Կուրի գետահովիտ, Նովոիվանովկա-Կուրի ավազան, Արծվաշեն-Գետաբակ-Կուրի ավազան ճանապարհներին [Դանիելյան 2022, 230-231]: Բրոնզ-երկաթեդարյան ժամանակաշրջանի ամրոցների խմբեր են տեղադրված նաև Դվին-Պարտավ ճանապարհի Սևան-Գավառ-Կոթավանք հատվածի երկայնքով [Մանանդյան 1936, 175-180, Սանամյան 2002, 221]:

Ք.ա. II հազ սկսած յայլաղային անասնապահության պայմաններում ամրոցների տեղաբաշխումը սկսում է ձգտել դեպի նախալեռնային ու լեռնայն գոտիներ: Արդեն խնդիր է ծագում պաշտպանել ոչ միայն հիմնական ճանապարհները, այլ նաև ալպյան մարգագետինների արոտավայրերն և նրանց մոտեցման ուղիները: Այդպես, դեպի տարածաշրջանի հիմնական յայլաղային արոտավայրեր՝ Սյունյաց լեռնաշղթայի Իշխանասարի հարավային ալպյան մարգագետինները տանող ուղիների վրա են տեղակայված Աղավնոյի գետահովտի Արահուծի, Սթունիսի,Աղավնաբերդի, Միրիկ-Աղահեճի, Հերիկի, Աղբատխերտի, Սպիտակաջրի ամրոցները [Սարգսյան և այլք 2022, 202]:

Սահմանների ամրագրումը: Պաշտպանական համակարգի կարևորագույն գործոններից է հանդիսանում սահմանը: Հիմնականում սահմանը հավաստվում է բնական տեղանքի տարրերով, առաջին հերթին՝ լեռնաշղթաներով: Իրենց հերթին, լեռնանցքները հանդիսանում են սահմանի

[1] Այս կարևոր գործառույթը ամրոցն իրականացնում էր նաև անտիկ շրջանում (Оганян 1990, 13)
[2] Պետական ցուցակ 8. Սյունիքի մարզ 44. գ. Խնածախ, 1.ամրոց Բինա
[3] Աս ճանապարհը իր նշանակությունը պահպանում էր նաև միջնադարյան ժամանակաշրջանում, ինչի մասին են վկայում Մելիք Հախնազարի դղյակները Խնածախում Պետական ցուցակ 8. Սյունիքի մարզ 44. գ. Խնածախ, 2.ապարանք Մելիք Հախնազար Ա-ի, և Մելիքաշենում, ամրացված վանական համալիրը Ծիծեռնավանքում:
[4] Հետազոտությունները՝ Լ. Մկրտչյանի, Գ. Սարգսյանի
[5] Հետազոտությունները, Գ. Սարգսյանի, Ա. Բոբոխյանի, Ա. Գնունու, Հ.Դանիելյանի

ամենախոցելի տեղը, որն անհրաժեշտ էր պաշտպանել [Карев 2011, 80]: Այսպես, Բերդկունք գյուղից ոչ հեռու Սևան-Գավառ ճանապարհի եզրին ձգվող կիկլոպյան պարիսպը, որը հանդիսանում էր, ամենայն հավանականությամբ երկու միավորների սահման փակում էր մոտակա լեռնանցքը [Միքայելյան 1968, 21]:

Այսպիսով, ուշ բրոնզ-վաղ երկաթի դարաշրջանում ձևավորվում է ամրացված համակառույցների մի համակարգ, որն ընդգրկում է ինչպես կենտրոնական բնակատեղին, այնպես էլ նրա մատույցները պաշտպանող փոքր հենակետային ամրոցները, տարածաշրջանի սահմանները վերահսկող ամրությունները: Ամրոցները նաև պաշտպանում էին հիմնական ճանապարհները, տնտեսական բջիջները և դրանք բնակավայրերի հետ կապող ճանապարհները: Միևնույն ժամանակ, բարդ համակարգերի առկայությունն ինքնին ենթադրում էր միավորների միջև համագործակցության ծավալում: Այս գործընթացը խթանվում էր նաև Հայկական լեռնաշխարհի ակտիվ ներգրավմամբ մերձավորարևելյան ռազմաքաղաքական գործընթացներում: սկսած Ք.ա. II հազ. վերջից ձևավորվում են առավել խոշոր միավորներ, ինչի հետևանքն է որոշ բնակավայրերի լքումը և բնակչության կենտրոնացումը քաղաքային խոշոր բնակավայրերում (օր.՝ Մեծամոր) [Ավետիսյան 2014, 64-65]:

Պաշտպանական համակարգի ձևափոխումները Վանի թագավորության ժամանակաշրջանում: Վանի թագավորության ներթափանցումը դեպի հյուսիս արևելք սկզբունքորեն նոր իրավիճակի հանգեցրեց տարածաշրջանում: Թեպետ այս ուղղությամբ առաջին ձեռնարկներն իրականացվել են դեռևս Մենուայի և Իշպուինեի համատեղ գահակալության ընթացքում, ինչի մասին վկայում է Օձասարի արձանագրությունը [Hmayakyan et al. 1996, 142-143], Մենուայի օրոք դրանք առավել մեծ թափ են ստանում՝ նպատակ ունենալով շրջափակել Էթիունիի տարածքը [Hmayakyan et al. 1996, 146]: Այս համատեքստում պետք է դիտարկել երկաթեդարյան Թաշբուրունի գրավումը և Մենուհինիլիի հիմնադրումը, որը փակելով Բայազետ-Արարատյան դաշտ ճանապարհը, միաժամանակ վերածվում է դեպի Արարատյան դաշտ արշավանքի հենակետի:

Ուրարտական էքսպանսիայի հաջորդ փուլը՝ Արաքսի անցումն էր և ձախակողմյան հատվածում հենակետերի կառուցումը: Դեռևս Բ. Պիոտրովսկին ենթադրում էր, որ դա տեղի է ունեցել դեռևս Մենուայի գահակալման ընթացքում [Пиотровский 1959, 64]: Դեպի Արաքսի ձախ ափ ներթափանցման մասին են վկայում նաև ուրարտական իրերի գտածոները Նորաշենից և Շարուրից [Bahşaliyev 1997, 117][1]: Այս նույն համատեքստում պետք է դիտարկել ուրարտական առաջխաղացումը դեպի Արտաշատ, որը տեղի է ունեցել դեռևս Մենուայի գահակալման շրջանում [Hmayakyan et al. 1996, 146, Առաքելյան 1981, 19, Մանուկյան 1981, 23-24, Զարդարյան և այլք 1991, 54-56, Խաչատրյան 1989, 53-54]: Բացառված չէ, որ Նախիջևանի տարածաշրջանը հենակետ հանդիսացավ Վայոց ձորի տարածաշրջանի նվաճման համար [Dan et al. 2022, 301], ինչը համապատասխանում է Էթիունիի կենտրոնական շրջանների (Արարատյան դաշտի) շրջափակման և մեկուսացման ռազմա-քաղաքական ծրագրին:

[1] Կարծիք կա, որ ուրարատացիները Տուշպայից հյուսիս-արևելք, մասնավորապես Անդրկովկաս, ներխուժել են Չինգիլյան լեռնանցքով անցնելով Արաքսը Արարատի կողմից, ապա, հաղթահարելով որոշ լեռնանցքներ, Զանգեմար գետի կիրճով հայտնվել Թագավորանիստում (Շահթախթի), ապա Արաքսի հովտով անցել Երևանի և Սևանա լճի կողմերը (Алекперов 1937, 256-258):

Արարատյան դաշտավայրի վերջնական գրավումը Արգիշտիի օրոք հանգեցրեց մի նոր պաշտպանական համակարգի ձևավորմանը, որն ընդգրկում էր Արաքսի ավազանը և դաշտավայրը օղակող նախալեռնային գոտիները: Այս համակարգի տրամաբանական կենտրոն էր հանդիսանում Էրեբունին, իսկ հետագայում նաև Թեյշեբաինին: Ընդ որում երկու ամրոցներն էլ ունեին կարևորագույն ռազմավարական նշանակություն ապահովելով հարթավայրային և նախալեռնային շրջանների կապը: Այս համատեքստում որոշ ամրություններ փոխում են իրենց գործառույթները: Այսպես գավառական կենտրոն հանդիսացող երկաթեդարյան Ցոլակերտին փոխարինած Մենուախինիլին վերածվում է Արարատյան դաշտի անվտանգությունն ապահովող կարևոր հանգույցի [Ивановский 1911, 38-56, Никольский 1895, 14-17]: Այս գործընթացը շարունակվում է նաև հետարգիշտյան ժամանակաշրջանում: Արարատյան դաշտի պաշտպանական համակարգի կարևորագույն հանգույցներից էր նաև Արգիշտիխինիլի քաղաքը: Այս նույն համատեքստում պետք է դիտարկել նաև Արմավիրի մարզի Խանջյան և Մյասնիկյան գյուղերի միջև գտնվող ուրարտական ժամանակաշրջանի ամրոցը[1]:

Բացի Արարատյան դաշտում գտնվող ամրոցներից (Էրեբունի, Թեյշեբաինի, Արգիշտիխինիլի) [Ավետիսյան, Բոբոխյան 2010, 63-95], ամրոցներ են տեղակայվում նաև դաշտավայրը եզրող բլուրներին (Դովրի, Արամուս, հավանաբար՝ Կապուտան[2] Արագած, Օշական, հավանաբար, Արբա) [Ավետիսյան, Բոբոխյան 2010, 96-112, Ավետիսյան, Ավետիսյան 2006, 119-129]: Ուրարտական ներկայությունը հավաստված է նաև Գառնիում [Խանզադյան 1969, 136-137][3]:

Միևնույն ժամանակ, արդեն Ռուսայի գահակալման օրոք Արարատյան դաշտը օղակվում է այսպես կոչված «մեռյալ գոտիով», ինչի մասին վկայում է նշված ժամանակաշրջանի թաղումային հուշարձանների բացակայությունը Արագածոտնի նախալեռնային շրջանում:

Մեկ այլ բնագիծ ապահովում էր Նախիջևանից և Արարատյան դաշտից Վայոց ձորով կամ Այրարատի լեռնային գոտիով դեպի Սևան տանող ճանապարհի անվտանգությունը [հմմտ. Ելփին 1 [Dan et al. 2022. 309] և Գետափ [Melkonyan et al. 2010, 94] ամրոցները):

Պաշտպանված էին նաև Արաքսի աջ ափը, որտեղ կառուցվեցին Կալե Սարանգ և Կալե Օղլի ամրացված հենակետերը [Jakubiak 2003, 17-18]: Փաստորեն Արարատյան դաշտը ձևավորվում է որպես միասնական պաշտպանական գոտի: Նմանատիպ պաշտպանական գոտիներ կային նաև տերության տարբեր ռազմավարական նշանակություն ունեցող հատվածներում՝ Վանի, Սևանի և Ուրմիայի ավազաններում [Jakubiak 2003, pl. XV]:

Ամրոցները պաշտպանում էին նաև կարևորագույն ճանապարհները: Այսպես, Հրազդանի հովտով դեպի Սևան տանող ճանապարհի անվտանգությունն ապահովում էին Դովրի [Հմայակյան 1991, 58-60], Սոլակ [Dan et al. 2022., 304], Արամուս, Կամարիս[4], Կապուտան[5] ամրոցները: Արաքսի

[1] Հետազոտությունները՝ Գ. Սարգսյանի, Լ. Մկրտչյանի
[2] Հետազոտությունները Գ. Սարգսյանի, Լ. Մկրտչյանի, Ա. Գնունու
[3] Ուրարտական ժամանակաշրջանում ձևավորված պաշտպանական գոտին պահպանեց իր նշանակությունը նաև միջնադարում: Նկարագրելով Վասակ Սյունու արշավանքը դեպի Արարատյան դաշտ Եղիշեն հիշատակում է նախկին ուրարտական կենտրոններից շատերը՝ Օշականը, Արմավիրը, Արտաշատը, Ցոլակերտը (Ցոլակերտի տեղադրության մասին հմմտ. ՝ Հակոբյան և այլք 2001, 162, Մանանդյան 1936, 28-30, Հիւբշման 1907, 373), Գառնին: Արժևորելով Արարատյան դաշտի ռազմավարական նշանակությունը Եղիշեն օգտագործում է «Միջնաշխարհ» եզրույթը (Եղիշե 1989, 158)
[4] հետազոտությունը՝ Հ. Ավետիսյանի
[5] հետազոտությունը՝ Գ. Սարգսյանի, Լ. Մկրտչյանի, Ա. Գնունու

հովտում տեղակայված ամրոցներն ապահովում էին Կաղզվանից դեպի Արաքսի ստորին հոսանք տանող մագիստրալ ճանապարհը[1]:

Ուրարտական ամրոցների համակարգը պաշտպանում էր նաև պետական ոռոգման համակարգը: Այսպես Թեյշեբաինի ամրոցը փաստորեն պաշտպանում էր Զվարթնոցի ջրանցքի ակունքները: Ամրոցներ էին պաշտպանում նաև Վանի ավազանի ոռոգման համակարգերը, մասնավորապես Մենուայի ջրանցքը ինչի մասին են վկայում Խուրկում գյուղի թերակղզու վրա տեղադրված ամրոցը, որը տիրապետող դիրք էր զբաղեցնում Վանի հյուսիս-արևելյան ափի, Խոշաբի գետաբերանի և ջրանցքի նկատմամբ: Խոշաբի հովիտը և ջրանցքը պաշտպանում էր նաև Հայկաբերդի ամրոցը [Пиотровский 1959, 139, Арутюнян, 1964, 22]:

Այսպիսով երկրում ձևավորվում է ամրոցների միասնական հիերարխիա, որը ներառում է խոշոր, միջին չափերի ամրոցները, փոքր ամրացված կենտրոններ: Տիպաբանորեն ամրացված միավորները կարող էին լինել թագավորանիստ, վարչական-տնտեսական, ինչպես նաև հենակետային տիպի աշտարականման կառույցները և աշտարակները, որոնք ապահովում էին Այս համակարգի գլխավոր առանձնահատկությունը՝ ամրացված համակարգի միասնականությունն է, որը թելադրված էր միասնական պետության պահանջներով [Ավետիսյան, Բոբոխյան 2010, 115]:

Գրականության ցանկ

Առաքելյան Բ. 1981, Արտաշատի 1979-1980 թթ. Պեղումների հիմնական արդյունքները, ՀՍՍՀ-ում 1979-1980 թթ. Դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան, Երևան ՀՍՍՀ ԳԱ հրատ., 19-20:

Ավետիսյան Հ., Ավետիսյան Պ. 2006, Արարատյան դաշտի մշակույթը մ.թ.ա. XI-VI դդ., Երևան, Երևանի համալսարանի հրատ. 395 էջ:

Ավետիսյան Հ., Բոբոխյան Ա. 2010, Ուրարտուի հնագիտություն, Երևան, Բավիղ, 233էջ

Ավետիսյան Հ., Բոբոխյան Ա., Գնունի Ա., 2020, Նախիջևանի պատմամշակութային զարգացումը բրոնզի և երկաթի դարաշրջաններում, Բանբեր Հայագիտության 2020, 1, 117-137:

Ավետիսյան Պ. 2014, Հայկական լեռնաշխարհը մ.թ.ա. XXIV-IX դդ. (սոցիալ-մշակութային ձևափոխումների դինամիկան ըստ հնաիտական տվյալների), պ.գ.դ. … գիտ. զեկուցում, Երևան, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ին-տ, 92 էջ:

Արեշյան Գ., Ղաֆադարյան Կ., Սիմոնյան Հ., Տիրացյան Գ., Քալանթարյան Ա. 1977, Հնագիտական հետազոտություններ ՀՍՍՀ Աշտարակի և Նաիրիի շրջաններում, ԼՀԳ, 2, 77-93:

Արեշյան Գ., Ասատրյան Ե. 1985, Հայագիտական կենտրոնի 1979-1983 թթ. դաշտային հնագիտական աշխատանքները, Բանբեր Երևանի Համալսարանի, N 3, 202-210:

Բարխուդարյան Ս. 1973, Դիվան հայ վիմագրության IV. Գեղարքունիք–Կամոյի, Մարտունու և Վարդենիսի շրջաններ, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 526 էջ:

[1] Սյունիքի հետ հաղորդակցությունը միջնադարյան և նոր շրջանի աղբյուրներում վկայված է մի քանի ուղղություններով. ա. Արաքսի երկայնքով (այս ճանապարհի գոյության մասին հին շրջանում կարելի է եզրակացնել Սեբեոսի մի ակնարկից. գրելով արաբական արշավանքի մասին նա Նախիջևանը և Խրամ քաղաքը նշում է Աղվանից աշխարհից հետո. «Իսկ այն զաւրն, որ ի կողմանս Այրարատեան, եհար սրով մինչեւ ի կողմանս Տայոց, Վրաց եւ Աղուանից, առ զաւար եւ զգերութիւն, ու եկն էանց ի Նախճաւան» (Սեբեոս, ԽԳ): Ճանապարհի այլ հիշատակումների համար հմմտ. Rubruk 1900, 266-273: Манандян 1954, 202:

Բոբոխյան Ա., Կունցե Ռ. 2022, Սոթքի ոսկեբեր հովտի պատմամշակութային նշանակությունը, Բոբոխյան Ա. և այլք (խմբ.), Սոթք. Հողի մշակութային հիշողությունը, Երևան, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ հրատ, 5-33:

Դանիելյան Հ. 2022, Արեգունու և Սևանիլեռնաշղթաների արևելյան ու արևմտյան լանջերի բրոնզ-երկաթեդարյան ամրաշինական համակարգը, Մ. Բաղալյան և այլք (խմբ.), Ծովային Հայաստան, Ուդուրի-Էթիունի երկրի հնագիտական ժառանգությունը, Երևան, ՀԱԻ հրատ., 224-237:

Եղիշե 1989, Վասն Վարդանայ և Հայոցպատերազմին, աշխ.Ե. Տեր-Մինասյանի, Երևան ԵՊՀ հրատ, 447 էջ:

Զարդարյան Մ., Մանուկյան Հ., Տոնիկյան Ա. 1991, Նոր հուշարձան հին Արտաշատի տարածքում, ՀՍՍՀ-ում 1989-1990 թթ. Դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան,, Երևան, ՀՀ ԳԱ հրատ., 54-56:

Խաչատրյան Ժ. 1989, Արտաշատի պեղումները, ՀՍՍՀ-ում 1987-1988 թթ. Դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան,,. Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ, 53-56:

Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ. 2001, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 5, Երևան ԵՊՀ հրատ., 528 էջ:

Հակոբյան Հ. 2010, Ծիծեռնակաբերդի 1998, 2007 թթ. հնագիտական ուսումնասիրությունների հիմնական արդյունքները, Հուշարձան Տարեգիրք, Զ., 21-33:

Հիւբշման Հ. 1907, Հին Հայոց տեղւոյ անուններ, Ազգային Մատենադարան, ԾԳ, Վիեննա, Մխիթարեան տպարան, 448 էջ:

Միքայելյան Գ. 1968, Սևանի ավազանի կիկլոպյան ամրոցները, Հայաստանի հնագիտական հուշարձանները, պր. I, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 65 էջ, 80 աղ.:

Մխիթարեանց Ա., **1904,** Դեպի Արարատ, Թիֆլիս, տպարան Հերմէս, 194 էջ:

Մովսես Խորենացի 1968, Պատմություն Հայոց, թարգմ. Ս. Մալխասյանցի Երևան, :Հայաստան 420 էջ:

Յակոբեան Ա. 1998, Հակարիի վերնահովտի նորայայտ վիմագրերը, Հանդես Ամսօրեայ, I-XII, 269-324:

Ղաֆադարյան Կ. 1975, Երևանի միջնադարյան հուշարձանները, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 250 էջ:

Մանանդյան Հ. 1936, Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները, Երևան, Մելքոնյան ֆոնդ, 278 էջ:

Մանուկյան Հ. 1981, Արտաշատից հայտնաբերված ուրարտական և ասորեստանյան կնիքները, 1979-1980 դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան, , Երևան ՀՍՍՀ ԳԱ հրատ., 23-25:

Մկրտչյան Լ. 2018, Նորահայտ աշտարակատիպ կառույցներ Արագածոտնի մարզում, Հ. Ավետիսյան (խմբ.), Արագածի թիկունքում, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 69-77:

Պարրոտ Ֆ. 1990, Դորպատից՝ Արարատ, Երևան, Նաիրի, 90 էջ:

Սանամյան Հ. 2002, Սևանի ավազանի ամրաշինության առանձնահատկությունները, Մ. Բաղալյան և այլք (խմբ.), Ծովային Հայաստան, Ուդուրի-Էթիունի երկրի հնագիտական ժառանգությունը, Երևան, ՀԱԻ հրատ., 214-223:

Սարգսյան Գ., Գնունի Ա., Հակոբյան Ա. 2014, Սյունիքի արևելյան սահմանների պաշտպանական համակարգի ձևավորումը մ.թ.ա. II-I հազ., Վեմ, N 1, 147-171:

Սարգսյան Գ., Գնունի Ա., Մկրտչյան Լ. 2022, Արցախի Հանրապետության Քաշաթաղի շրջանի ամրոցները, Երևան, Նռանէ, 235 էջ:

Սեբէոս 1939, Սեբէոսի եպիսկոպոսի պատմութիւն, աշխ. Ստ. Մալխասեանց, Երևան, ԱրմՖԱՆ, 216 էջ:

Սիմոնյան Հ., Գաշ Հ., Ժամկոչյան Ա., Վարդանյան Ռ., Հմայակյան Ս., Կարապետյան Ի., Ավետիսյան Պ. 1996, Հայ-բելգիական համատեղ պեղումներ Ոսկեվազում, ՀՀ-ում 1993-1995 թթ. հնագիտական հետազոտությունների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան (զեկուցումների թեզեր), Երևան, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 68-70:

Եսայան Ս. 1972, Երևան քաղաքի պատմության թանգարանի հնագիտական իրերի կատալոգ, պր. III, Երևան, Երևանի պատմության թանգարան, 173 էջ:

Քալանթար Ա. 2007, Հայաստանը քարե դարից միջնադար, Երևան ՀՀ ԳԱԱ «Գիտություն», հրատ., 408 էջ:

Алекперов А. 1937, Крашенная керамика Нахичеванского края и Ванское царство, Советская археология IV, 249-263.

Арутюнян Н. 1964, Земледелие и скотоводство Урарту, Ереван, изд-во АН Арм ССР, 226 с.

Асатрян Е. 1989, Раннесредневековые крепости поселения Армении (по материалам памятников Арагацотна) автореферат дис.. канд. ист. наук. Ереван, ин-т археологии и этнографии АН Арм. ССР, 21 с.

Бадалян Р., Смит А. 2008, Поселение Гехарот: основные результаты раскопок 2005-2006 гг., Հին Հայաստանի մշակույթը, XIV, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 45-68.

Байбуртян Е. 2011, Последовательность развития древнейших культур Армении., Ереван, Музей истории Армении, 110 с.

Виттфогель К. б. д. Деспотизм Востока. Сравнительное исследование тотальной власти http://samlib.ru/s/strahow_a_a/wittfogel-oriental-despotism.shtml#2.

Есаян Г. 1992, Материальная культура реки Агстев в развитом средневековье, Ереван, изд-во ЕрГУ, 160 с.

Есаян С. 1969, Ереван (археологический очерк), Ереван, Айастан, 112 с., 42 таб.

Есаян С. 1976, Древняя культура племен Северо-восточной Армении, Ереван, изд-во АН Арм.ССР, 270 с.

Ивановский А. 1911, По Закавказью, Материалы по археологии Кавказа, вып. VIII, 220 с.

Кареев Н. 2011, Историология, Москва, Книжный дом, 320 с.

Манандян Я. 1954, О торговле и городах Армении, Ереван.изд-во Ереванского Университета, 344 с.

Мартиросян А. 1961, Город Тейшебаини, Ереван изд-во АН Арм.ССР, 158 с., 19 таб.

Мечников Л. 1898, Цивилизация и великие исторические реки, Санкт-Петербург, изд-во журнала жизнь, 200 с.

Никольский М. 1896, Клинообразные надписи Закавказья, МАК, вып V, Москва, тип. О. Гербека. 136 с.

Оганян О. 1990, Культура античных поселений Армении (по материалам раскопок поселений Арагацотна), автореферат дис.. канд. ист. наук. Ереван, ин-т археологии и этнографии АН Арм. ССР, 24 с.

Пиотровский Б. 1950, Кармир Блур I, Ереван, изд-во АН Арм.ССР, 100 с., 16 таб.

Пиотровский Б. 1959, Ванское царство, Москва, Издательство восточной литературы, 341 с.

Пицхелаури К. 2018, Древнегородские памятники конца II начала I тыс. до н. э. на Иорской возвышенности, Հ. Ավետիսյան (խմբ.), Արազածի թիկունքում, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 53-59:

Шопен И. 1852, Исторический памятник состояния Армянской области в эпоху ее присоединения Российской империи, Санкт Петербург, Типография императорской Академии Наук, 1232 с.

Badalyan R., Avetisyan P. 2007, Bronze and Early Iron Age Archaeological Sites in Armenia, Mt. Aragats and its Surrounding Region, Oxford, Bar International Series 1697, 320 p.

Biscione R., Hmayakyan S., Parmegiani N. 2002, The North-Eastern Frontier: Urartians and Non-Urartians in the Sevan Lake Basin, I, The Southern Shores, Documenta Asiana, VII, Roma, 540 p.

Bahşaliyev V. 1997, Archaeology of Nakhichevan, Istanbul, Arkeoloji ve sanat yayınları, 128 s., 29 tab .

Dan R., Petrosyan A., Vitolo P., Gasparyan B. 2022. From the Ararat Depression to Lake Sevan. An analysis of the Urartian Military Roads in the Territpry og modern-day Armenia (Late 9-th to Mid 8-th centuries B.C.), Մ. Բաղալյան և այլք (խմբ.), Ծովային Հայաստան, Ուդուրի-Էթիունի երկրի հնագիտական ժառանգությունը, Երևան, ՀԱԻ հրատ., 224-237:

Hmayakyan S., Igumnov V., Karagyozyan H. 1996, Urartian cunieform Inscription from Ojasar-Ilandagh, Nakhichevan, Studio Micenai ed Egeo-Anatolici, fasc. XXXVIII, Roma, 140-151.

Jakubiak K. 2003, The Development of Defence system of Eastern Anatolia (Armenian Upland), Warszawa, Instytut arheologii, 80 p. 18 ill.

Melkonyan H., Karapetyan I., Yengibaryan N. 2010, The Excavations of the newly found Fortress in Getap, Aramazd, Armenian Journal of NEAR Eastern Studies, V/2, 90-97.

Özfirat A. 2017, Eriqua and Minuahinili: An Early Iron Age Nairi Kingdom and Urartian Province of the Nothern Slope of Mt. Ağri, Tub-Ar, 21, 63-93.

Rubruk W. 1900, The Journey of William Rubruk to the Eastern Part of the World (1253 1255), London. Printed foe Hukluyt Society, 304 p.

Smith A., Badalyan R., Avetisyan P. 2009, The Foundation of Research and Regional Survey in the Tsaghkahovit Palin, Armenia, Chicago, Oriental Institute Publications, 134, 541 p.